

Իրավագիտություն

Ռաֆիկ Պետրոսյան

Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ,
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր
իրավաբան

Էլ. հասցե՝ research.incubator@eiu.am

Նունե Զոմարդյան

ԵՄՀ իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ, նույն ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ nune.jomardyan@eiu.am

DOI: 10.53614/18294952-2021.2-10

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածում վերլուծվել է «սոցիալական պաշտպանություն» հասկացության բովանդակությունը, որը բնութագրվում է որպես մարդու իրանունք, որպես քաղաքականությունների ու ծրագրերի ամբողջություն և որպես ռիսկերի կառավարման բազմաշերտ համակարգ: Փաստվում է, որ սոցիալական պաշտպանությունը որպես մարդու հիմնական իրավունք, պատկանում է յուրաքանչյուրին ու իրագործվում ողջ կյանքի ընթացքում: Ուստի սոցիալական պաշտպանության օրենսդրությունը պետք է բխի «սոցիալական պաշտպանություն բոլորի համար» հայեցակարգից և միտված լինի ազգային մակարդակում սահմանելուն սոցիալական պաշտպանության նվազագույն մակարդակ: Հաշվի առնելով 2020 թ. իրադարձությունների հետևանքով երկրում առկա ծգնաժամը՝ Արցախի և Հայաստանի անվտանգության ապահովման ու հետծգնաժամային սոցիալ-տնտեսական վերականգնման հետ կապված, ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի անորոշության պայմանները, առաջարկվում է ձևավորել սիներգետիկ (փոխազդող) արդյունավետություն ունեցող սոցիալական պաշտպանության համակարգ, մշակել քաղաքական և օրենսդրա-

կան ռազմավարություններ, ստեղծել սոցիալական պաշտպանության համակարգի ամուր իրավական և ինստիտուցիոնալ հիմքեր:

Հիմնաբառեր. սոցիալական պաշտպանության ինստիտուտ, սոցիալական պաշտպանություն, իրավունք, սոցիալական ապահովություն, աշխատանք, ռիսկեր:

Ներածություն

Սոցիալական անհավասարության բարձր մակարդակը, սոցիալական պաշտպանության և արժանապատիվ աշխատանքի անհասանելիությունն անմիջականորեն կապված են մարդկանց սոցիալական բացառվածության հետ և վտանգում են պետությունների կայուն զարգացումը: Դրա վառ դրսևորումներից են համաժողովրդական ընդվզումները տարբեր երկրներում, ինչպիսիք են «Արաբական գարունը» (MOT, 2018, էջ 13), Հայաստանի «թավջյա հեղափոխությունը» և այլն: Այս իրադարձությունները ցույց են տալիս, որ պետության հանդեպ անվստահությունը, անհավասարության բարձր մակարդակը և սոցիալ-տնտեսական իրավիճակից դժգոհությունը կարող են խթանել և սրել սոցիալական անկայունությունը, հանգեցնել սոցիալական հուզումների:

Հաշվի առնելով վերը նշվածները՝ քաղաքականություն մշակողները սոցիալական պաշտպանությունը ճանաչում են որպես աղքատության և խոցելիության դեմ պայքարի հիմնական ռազմավարություն՝ միաժամանակ խթանելով ներառվածության սոցիալական զարգացումը և արդար տնտեսական աճը (OECD, 2019a, էջ 6): Այն նաև գիտակցվում և պաշտոնական ամրագրում է ստանում որպես պետական անվտանգության, ազգի և պետականության պահպանման կարևորագույն կառուցակարգ: Այսպես՝ սոցիալական պաշտպանությունը, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բաղադրիչի, այն է՝ տնտեսական անվտանգության հիմնախնդիրների լուծման միջոց, ներառված է երկրների ազգային անվտանգության ռազմավարության մեջ¹:

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել սոցիալական պաշտպանության ինստիտուտի առկա վիճակն ու դրա զարգացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում:

Տեսական հիմունքներ ու մեթոդ

Սույն հետազոտությունը ելնում է այն դրույթից, որ սոցիալական պաշտպանությունը նախնառաջ մարդու իրավունք է, որը հիմնվում է Աշխատանք-

1 Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներից բխող՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր (Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներից բխող՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 15-րդ հունիսի 2010 թվականի N 452-Ն որոշման Հավելված N 1, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի N 452-Ն որոշման)

քի միջազգային կազմակերպության կողմից սահմանված «սոցիալական պաշտպանություն բոլորի համար» հայեցակարգի վրա:

Հենվելով դիպլեկտիկայի կանոնների վրա՝ հեղինակներն աշխատել են նախանշել սոցիալական պաշտպանության հայեցակարգի կատարելագործման հետագա ուղղությունները, իսկ սոցիալական պաշտպանության ոլորտի կապը աշխատանքի, կայուն զարգացման և տնտեսական բնագավառների հետ ուսումնասիրվել է սիներգիայի (փոխազդման) մեթոդի հիման վրա:

«Սոցիալական պաշտպանություն» հասկացության արդի իրավաբնկալումը

«Սոցիալական պաշտպանություն» հասկացությունը տեսության մեջ և պրակտիկայում մեկնաբանվում է լայն ու նեղ իմաստներով՝ հաշվի առնելով վերջինիս հարաբերակցությունը «սոցիալական ապահովություն» հասկացության հետ: Օրինակ, Աշխատանքի միջազգային կազմակերպության դիրքորոշման համաձայն սոցիալական պաշտպանությունը նույնացվում է սոցիալական ապահովության հետ: Այն դիտարկվում է որպես մարդու իրավունք և սահմանվում որպես քաղաքականությունների ու ծրագրերի ամբողջություն՝ ուղղված աշխարհի բոլոր մարդկանց համար ողջ կյանքի ընթացքում աղքատության, խոցելիության և սոցիալական բացառվածության կրճատմանն ու կանխարգելմանը (World Social Protection Report, 2017, էջեր 194–195)²: Բայցևայնպես «սոցիալական պաշտպանություն» կատեգորիան, երբ այն ներառում է ընտանիքի կամ տեղական համայնքի անդամներին տրամադրվող պաշտպանությունը, կիրառվում է ավելի լայն իմաստով, քան «սոցիալական ապահովությունը»: Որոշ դեպքերում էլ այն կիրառվում է ավելի նեղ իմաստով քան սոցիալական ապահովությունը՝ ընկալվելով որպես հասարակության ամենաաղքատ, առավել խոցված և բացառված անդամների հասցեագրված միջոց (World Social Protection Report, 2017, էջեր 194–195):

Ընդհանուր առմամբ «սոցիալական պաշտպանություն» և «սոցիալական ապահովություն» եզրույթների հարաբերակցության հարցը շատ է քննարկվում մասնագիտական գրականության մեջ: Եթե ԱՄԿ-ը համարում է, որ սոցիալական պաշտպանությունը 20-րդ դարում առաջ եկած «սոցիալական ապահովություն» հասկացության ժամանակակից անվանումն է, ապա հետազոտողներից շատերը այս երկու հասկացությունների միջև տեսնում են որոշ տարբերություններ: Վերջիններիս պատկերացմամբ սոցիալական ապահովությունը հանդիսանում է սոցիալական պաշտպանության բովանդակության ամենակարևոր բաղադրիչը (Право социального обеспечения, 2020, էջ 19: Сулейманова, 2021, էջ 11. Буянова, 2017, էջ 14), դիտարկվում որպես սոցիալական արդարության սկզբունքի վրա հիմնված սոցիալական պաշտպանության կառուցակարգ (Յարմալոյան, 2016, էջ 23): Անգամ ԱՄԿ-ը վերջին

²Նման դիրքորոշում են հայտնում նաև մի շարք այլ միջազգային կառույցներ և առանձին հետազոտողներ: St 'u Collaborating for policy coherence and development impact, 2019, էջ 2. CODI – Core Diagnostic Instrument. 2014, էջ 7. IADB, 2017. Stephen Devereux and Rachel Sabates-Wheeler, 2004.

տասնամյակի իր գեկույցներում, պրագմատիկորեն «սոցիալական պաշտպանություն» եզրույթն օգտագործում է երկու տեսանկյունից՝

- որպես սոցիալական ապահովության համակարգերի կողմից տրամադրվող «պաշտպանություն»՝ սոցիալական ռիսկերի և կարիքների դեպքում (Social security for social justice and a fair globalization, 2011, էջ 9. ILO, 2010, էջեր 125–128),
- որպես ՄԱԿ-ի գործակալությունների խմբի կողմից ընդունված սոցիալական պաշտպանության նվազագույն մակարդակի ապահովման նպատակով ոչ միայն սոցիալական տրանսֆերտների, այլև մի շարք հիմնական սոցիալական ծառայությունների հասանելիությունն ընդգրկող համակարգ (Deliberations of the United Nations System Chief Executives Board for Coordination, 2009, 1):

Հայերենական մասնագիտական գրականությունում (Յարմալոյան Մ., Վարդանյան Եվ. և այլն) գերակշռում է այն տեսակետը, որ տվյալ հասկացությունները միմյանցից տարբերվում են: ՀՀ սահմանադրական դատարանն իր 2 ապրիլի, 2014 թ. ՍԳՈ-1142, որոշման մեջ արձանագրել է, որ, ի տարբերություն սոցիալական ապահովության, սոցիալական պաշտպանությունն առավել լայն հասկացություն է, որը ներառում է ոչ միայն սոցիալական ապահովությունը՝ այլև սոցիալական ապահովագրությունը և պետության ու հասարակության կողմից իրականացվող սոցիալական օգնությունը:

Տվյալ եզրույթները տարբերվում են նաև բառաբանական իմաստով: Ըստ հայերենի բացատրական բառարանների՝ ապահովությունը նշանակում է բարեկեցիկ կյանք, նյութական բարեկեցություն (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, հատոր 1, էջ 163), ապահովված լինելու աստիճան՝ մակարդակ (Աղայան, 1976, էջ 96): Սոցիալական ապահովությունը համապատասխանաբար նշանակում է գումար, որը կառավարությունը կանոնավոր կերպով վճարում է աղքատ, գործազուրկ, հիվանդ և այլ մարդկանց (Oxford Advanced Genie English Dictionary, 2004), որոնք տրամադրվում են որոշակի սոցիալական ռիսկերի առաջացման (կամ առկայության) դեպքում՝ կապված մարդու կամ նրա ընտանիքի անաշխատունակ անդամների հնքնությունն ապրելու բավարար միջոցներով ապահովելու անկարողության հետ (Большая Российская энциклопедия, 2004. էջ 563): Սոցիալական ապահովությունը մեկնաբանվում է նաև որպես «...պետության կողմից այն մարդկանց մատուցվող գոյության բավարար միջոցների քանակ, որոնք լրիվ կամ մասնակի զրկված են աշխատելու և եկամուտ ստանալու հնարավորությունից» (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, 2010, էջ 453):

Հայերենի բացատրական բառարանները պաշտպանություն եզրույթը համապատասխանաբար բնութագրում են որպես որևէ բանի պաշտպան լինելը, պահպանի դեր կատարելը, թշնամու հարձակումները հետ մղելու կամ կանխելու միջոցով (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, հատոր 4, էջ 162), ինչպես նաև վնասական գործողություններից պաշտպանվելը, պաշտպանելը (Աղայան, 1976, էջ 1181): Ակնհայտ է, որ նյութական

միջոցների տրամադրումը հանդիսանում է պաշտպանության միջոց, սակայն պաշտպանությունն ինքնին դրանով չի սահմանափակվում: Սոցիալական պաշտպանությունը նյութական միջոցներից բացի ներառում է պաշտպանության տարբեր իրավական և կազմակերպական միջոցներ:

Պաշտպանությունը կարող է ուղղված լինել ոչ միայն անբարենպաստ հետևանքների փոխհատուցմանը, այլև կանխելու դրանք առաջացնող իրադարձությունները, քանի որ կանխարգելումը նույնպես կոչված է պաշտպանելու ինչ-որ մեկին ինչ-որ թշնամական, վնասական գործողություններից արժանապատիվ կյանքի և ազատ զարգացում ապահովման համար: Հետևաբար, սոցիալական պաշտպանության նպատակն է կանխել և պաշտպանել մարդկանց տարաբնույթ սոցիալական ռիսկերից՝ աղքատությունից, անապահովությունից և սոցիալական մեկուսացվածությունից:

Սոցիալական ապահովությունն իրականացվում է այդ գործունեությունն իրագործելու համար ստեղծված պետական մասնագիտացված մարմինների՝ սոցիալական ծառայությունների կողմից: Մինչդեռ սոցիալական պաշտպանության սուբյեկտներ են ոչ միայն պետական իշխանության մարմինները, այլև՝ տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկատերերը և հասարակական միավորումները՝ որպես սոցիալական երկխոսության մասնակիցներ: Աշխատակիցները ևս կրում են տնտեսական պատասխանատվություն աշխատավայրում սոցիալական պաշտպանության ապահովման համար³: Որոշ դեպքերում որպես սոցիալական պաշտպանության սուբյեկտ են հանդես գալիս առանձին ընտանիքներ (օրինակ՝ խնամատար ընտանիքները):

Կարևոր է ընդգծել նաև, որ բնակչության սոցիալական պաշտպանությունը կարգավորվում է սոցիալական օրենսդրությամբ: Այն ունի համալիր բնույթ և ընդգրկում է ոչ միայն սոցիալական ապահովությանը վերաբերող օրենսդրությունը, այլև՝ մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավական ակտերը, սահմանադրությունը, աշխատանքային, հարկային, բնակարանային, ընտանեկան օրենսդրությունը, օրենքներ, որոնք կարգավորում են պետական ծառայողների գործունեությունը և այլն (Маликова, 2012, էջ 262):

Վերը նշվածից կարող ենք եզրակացնել, որ սոցիալական պաշտպանությունն ավելի լայն հասկացություն է քան սոցիալական ապահովությունը, որը հանդես է գալիս որպես քաղաքականությունների ու ծրագրերի ամբողջություն և ռիսկերի կառավարման բազմաշերտ համակարգ: Այն ուղղված է սոցիալական ռիսկերի կանխարգելմանը, ինչպես նաև դրանց հետևանքների մեղմացմանն ու վերացմանը (Кузнецова, 2010, էջեր 7–8; Holzmänn, Jorgensen, 2001, էջեր 529–530):

Սոցիալական պաշտպանության բովանդակության ներուժը բացահայտելու համար անդրադառնանք նաև ԱՄԿ-ի կողմից առաջ քաշված մեկ այլ դրույթի, ըստ որի սոցիալական պաշտպանությունը հանդես է գալիս որպես

3 Զիկինսն նշում է, որ «աշխատողներն իրենց աշխատանքով և դրա դիմաց ստացած աշխատավարձով, որպես սոցիալական արտադրության մեջ իրենց անձնական աշխատանքային ներդրման համարժեքություն, նպաստում են սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորմանը»: (Зыкина, 2014, էջ 18):

մարդու իրավունք (ILO, 2012, No. 202), որը մարմնավորված է սոցիալական ապահովության իրավունքում և ամրագրված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (1948)⁴: Նմանատիպ մոտեցում է դրսևորում նաև Եվրոպական միությունը (Regulation (EC) No 883/2004, Regulation (EEC) No 1408/71): Ընդունելով այն փաստը, որ սոցիալական պաշտպանությունը մարդու հիմնական իրավունքներից մեկն է՝ մեկ անգամ ևս ընդգծում ենք, որ, ի տարբերություն սոցիալական ապահովության, այն բազմաշերտ ոլորտ է և սոցիալական ապահովությունից զատ ընդգրկում է զբաղվածության և աշխատանքի, սոցիալական աջակցության, սոցիալական ծառայությունների, հավասար հնարավորությունների, կենսաթոշակի և այլ բնագավառներ: Այդ մասին է վկայում նաև «Փոխակերպելով մեր աշխարհը. կայուն զարգացման 2030 օրակարգ» հանձնարարականը, որի հիմնական տեսլականն է՝ չանտեսել և չթողնել ոչ ոքի ետևում (General Assembly resolution 70/1 of 25 September 2015, պարբերություն 4): Այս առումով սոցիալական պաշտպանությունն իր սեփական նպատակների իրականացումից բացի հանդես է գալիս որպես կամուրջ Կայուն զարգացման ծրագրի և ոչ ոքի ետևում չթողնելու սկզբունքի միջև (BMZ Paper, 2017, No. 9, էջ 4), որից ինքնին պարզ է դառնում, որ միայն սոցիալական ապահովության միջոցով նշված նպատակների իրագործումն անհնար է: Այս ամենը նշանակում է, որ բոլոր մարդիկ ունեն սոցիալական պաշտպանության իրավունք, իսկ պետությունները՝ պարտավորություններ մարդու իրավունքներին վերաբերող միջազգային նորմերին համպատասխան երաշխավորելու սոցիալական պաշտպանության նվազագույն մակարդակ: Շատ երկրներում այս իրավունքն ամրագրված է նրանց սահմանադրություններում, մասնավորապես՝ Բուլթան, Մալդիվներ և Ուզբեկստան, մինչդեռ այլ երկրներում սոցիալական պաշտպանությունը նրանց օրենսդրության կարևոր մասն է, ինչպիսիք են Չինաստանը և Մոնղոլիան (MOT, 2018, էջ 2):

Սոցիալական պաշտպանության հիմնախնդիրներն ու հնարավոր լուծումները Հայաստանի Հանրապետությունում

ՀՀ Սահմանադրությունում սոցիալական պաշտպանությունը որպես այդպիսին ամրագրված չէ: Ներկայացված են միայն նրա առանձին տարրերը, օրինակ՝ բնակչության սոցիալական ապահովության, արժանապատիվ աշխատանքի և երաշխավորված նվազագույն աշխատավարձի իրավունքները: Փոխարենն, օրենսդիրն այս հասկացության բովանդակությունը փորձել է բացահայտել Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում, ըստ որի «հաշմանդամների սոցիալական պաշտ-

4 Սոցիալական ապահովության իրավունքն ամրագրված է նաև մի շարք այլ միջազգային փաստաթղթերում՝ Տեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, Երեխայի իրավունքների մասին, Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին և այլ միջազգային դաշնագրերում:

պանությունը տնտեսական, սոցիալական և իրավական միջոցառումների համակարգ է, որը հաշմանդամների համար ապահովում է կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու, փոխարինելու (փոխհատուցելու) պայմաններ և ուղղված է հասարակական կյանքում նրանց մասնակցության համար մյուս քաղաքացիներին համարժեք հնարավորությունների ապահովմանը»: Մեր կարծիքով օրենսդիրը տվյալ հոդվածում փորձել է տալ սոցիալական պաշտպանության բովանդակության ամբողջական մեկնաբանում, սակայն տարածել է այն սահմանափակ սուբյեկտների վրա և լիարժեքորեն չի բացահայտել վերջինիս իմաստը:

Մենք ելնում ենք այն դրույթից, որ սոցիալական պաշտպանությունը նախևառաջ մարդու իրավունք է և որպես այդպիսին պատկանում է յուրաքանչյուրին ու իրագործվում ողջ կյանքի ընթացքում: Այն նաև երաշխավորվում ու պաշտպանվում է պետության կողմից: Անձը, հայտնվելով կյանքի դժվարին պայմաններում, պետք է գտնվի պետության հոգածության ներքո, նրա օգնությամբ հաղթահարի առկա դժվարությունները և ապահովի իր հետագա բնականոն զարգացումն ու արժանապատիվ կյանքը: Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը հնարավորություն է տալիս ներպետական իրավական դաշտը համապատասխանեցնել գործող միջազգային չափանիշներին, որոնք բխում են «սոցիալական պաշտպանություն բոլորի համար» հայեցակարգից, նպատակադրված են հասնել բնակչության համընդգրկմանը և միտված են ազգային մակարդակում սահմանել սոցիալական պաշտպանության նվազագույն մակարդակ (Social protection floor..., 2011, էջ xxiii): Դա նշանակում է, որ յուրաքանչյուր անձի՝ իր կարիքներին համապատասխան և կյանքի ողջ ընթացքում պետք է հասանելի լինի որոշակի բովանդակությամբ և ծավալով սոցիալական պաշտպանության ծառայությունների նվազագույն և հասցեական փաթեթ (Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման 2020-2025 թվականների ռազմավարության նախագիծ):

Խնդրի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ աշխարհի բնակչության 55 տոկոսը գտնվում է ամբողջությամբ անպաշտպան վիճակում, իսկ մարդկանց զգալի մասը միայն մասամբ է ծածկված սոցիալական պաշտպանության համակարգերով (ILO, 2017a): Հայաստանում բնակչության հիմնական խմբերն ընդգրկված են սոցիալական պաշտպանության ծրագրերում, սակայն որոշ խոցելի խմբեր, ինչպիսիք են 2-3 տարեկան երեխաները, փախստականները, անօթևանները, հակասոցիալական վարք դրսևորած անձինք, երիտասարդները և միջին տարիքի գործազուրկները, գրեթե չեն օգտվում սոցիալական պաշտպանության ծրագրերից: Խնամքի ծառայությունների ծրագրերի մեծ մասն ունի սահմանափակ ծածկույթ, իսկ դրամական աջակցության ծավալները, ընդհանուր առմամբ, ցածր են աղքատության գծից (Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի խորքային անալիզ, 2020, էջ 15-16): Լուրջ խնդիրներ են առաջացնում նաև 2020 թվականին երկրին պատուհասած ձգնաժամերի՝ կորոնավիրուսի համավարակի և Արցախի Հանրապետության նկատմամբ Ադրբեյջանի Հան-

րապետության կողմից սեպտեմբերի 27-ից սանձազերծած պատերազմի հետևանքները:

Դրա հետ մեկտեղ համաշխարհային զարգացումներին ընդառաջ թվայնացումը, ավտոմատացումը և համաշխարհայնացումը պահանջում են, որ պեսզի սոցիալական պաշտպանության համակարգը հարմարեցվի փոփոխվող պայմաններին և նոր պահանջներին: Հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակակից աշխատաշուկայում տեղի է ունենում աշխատանքի պայմանների դիֆերսիֆիկացիա, վերանում կամ փոխակերպվում են զբաղվածության որոշ ավանդական տեսակներ՝ առաջ են գալիս զբաղվածության նոր ձևեր տարբեր զբաղմունքներում և ոլորտներում, օրինակ՝ թվային հարթակներում, այսպես կոչված, պլատֆորմային տնտեսություններում կատարվող աշխատանքները (OECD, 2019b. OECD, 2016): Զբաղմունքների այս ձևերը բացում են նոր հնարավորություններ և միաժամանակ ստեղծում խնդիրներ աշխատաշուկայի և սոցիալական պաշտպանության համար (ILO, 2017b): Դրանց շարքում են տարբեր առցանց հարթակներում աշխատող անձինք (տաքսու վարորդներ, առաքիչներ, ազատ, արտահաստիքային աշխատողներ (freelancers) և այլն), որոնք շեղվում են «ստանդարտ», լրիվ դրույքով աշխատանքային հարաբերություններից: Այդ աշխատանքների մեծ մասը կրում են նպատակաուղղված, ժամանակավոր, հաճախ պատահական բնույթ, իսկ իրական ինքնազբաղվածության և թաքնված աշխատանքային հարաբերությունների միջև սահմանները հաճախ մշուշվում են (Behrendt, 2019, էջեր 17-4): Այս որոլտում առաջացող սոցիալական պաշտպանվածության բացերը չեն կարող փոխարինվել համընդհանուր հիմնական եկամուտով կամ անհատական խնայողությունների կառուցակարգերով: Այդ իսկ պատճառով պետությունը օրենսդրական մակարդակում պետք է երաշխավորի համընդհանուր սոցիալական պաշտպանություն յուրաքանչյուրի համար ողջ կյանքի ընթացքում:

ԱՄԿ-ի № 202 հանձնարարականին համապատասխան երկրի սոցիալական պաշտպանության նվազագույն մակարդակը պետք է ներառի պետության կողմից սահմանված առնվազն հետևյալ 4 երաշխքները՝

- հիմնական առողջապահական ծառայություններ՝ ներառյալ մայրական առողջության, հասանելիության երաշխավորումը,
- երեխաների համար նախատեսվող եկամտի հիմնական երաշխիքներ, որոնք ուղղված են ապահովելու սննդի, կրթության, խնամքի և այլ առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների հասանելիություն,
- հիմնական եկամտի երաշխիքներ այն տնտեսապես ակտիվ տարիքի անձանց համար, ովքեր չեն կարողանում բավարար եկամուտ ստանալ, այդ թվում՝ հիվանդության, գործազրկության, հղիության և ծննդաբերության և հաշմանդանության հետևանքով,
- տարեցների համար հիմնական եկամտի երաշխիքներ:

Հայաստանի Հանրապետությունն արդեն իսկ ունի սոցիալական ապահովագրության, պետական սոցիալական աջակցության և սոցիալական ծա-

ռալությունների տրամադրման օրենսդրության մշակված համակարգ: Այնուամենայնիվ, այս ակտերից շատերը չեն բավարարում սոցիալական պաշտպանության իրավական կարգավորման նոր միտումներին: Ըստ փորձագետների՝ դեռևս 2014 թվականից կառավարությունը նախատեսել էր անցում կատարել դրամական աջակցության ծրագրերից դեպի խոցելի ընտանիքների կարիքների վրա հիմնված փաթեթային աջակցության ծրագրերին: Չնայած դրան՝ սոցիալական պաշտպանության համակարգը շարունակում է մեծապես հենվել դրամական աջակցության ծրագրերի վրա, իսկ սոցիալական պաշտպանության նվազագույն մակարդակը Հայաստանում մինչ օրս սահմանված չէ (Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի խորքային ավտորոշում, 2020, էջ 16): Այս պարագայում սոցիալական պաշտպանության իրավունքի ապահովման համար կարևոր նշանակություն է ստանում կենսաապահովման նվազագույն զամբյուղի չափը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն Հայաստանում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2021թ. առաջին եռամսյակի դրությամբ կազմել է 66 568.6 դրամ, որից 35 983 դրամը պարենային զամբյուղի արժեքն է (Հետաքրքրաշարժ վիճակագրություն: 2021թ. հունվար-մարտ): Այսինքն՝ կենսաապահովման նվազագույն զամբյուղի 54%-ը կազմում է սննդամթերքը, իսկ 46%-ը բաժին է ընկնում ոչ պարենային ապրանքներին և կոմունալ ծառայություններին: Եթե այս թվերը համեմատենք զարգացած այլ երկրներում առկա վիճակին, ապա կտեսնենք, որ պարենային և ոչ պարենային ապրանքների հարաբերակցությունն այդ երկրներում կազմում է 20%: Օրինակ՝ ԱՄՆ-ում առաջին տեղում են գտնվում բնակարանային և կոմունալ ծառայությունների դիմաց վճարումները (42%), մինչդեռ սննդամթերքի մասնաբաժինը կազմում է 19% (U.S. Bureau of Labor Statistics, 2021):

Վերը նշված ցուցանիշը վկայում է, որ ՀՀ-ում գործող նվազագույն կենսամակարդակը փաստորեն ուղղված է միայն գլխավոր ֆիզիկական պահանջունքների և հիմնական ծառայությունների ապահովմանը, իսկ աղքատության հաղթահարումը սեղմվել, վերածվել է նյութական նվազագույն կարիքների բավարարման գործընթացի, և նույնիսկ այս պայմաններում ՀՀ բնակչության 26,4%-ը⁵ չի կարողանում լուծել իր նյութական գոյության նվազագույն խնդիրները: Մինչդեռ սոցիալական արդարության դիրքերից կենսաապահովման նվազագույն զամբյուղը պետք է նախատեսված լինի ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական և հոգևոր կարիքների բավարարման համար, որոնք հասարակության կողմից ճանաչվել են անհրաժեշտ սոցիալապես ընդունելի ապրելակերպի համար: Ըստ էության այդպիսին է նաև «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն քյուջեի մասին» օրենքի 3-րդ հոդվածի պահանջը: Այդ իսկ պատճառով հույժ կարևոր է, որպեսզի նշված օրենքի դրույթները գործի դրվեն ամբողջությամբ: Այսպես՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը սահման-

5 Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. աղքատության մակարդակի (Պարենի մատչելիություն, 2021թ. հունվար-մարտ)

վում է օրենքով: Սակայն մինչ օրս նմանօրինակ օրենք դեռ չի ընդունվել, մինչդեռ օրենդրական ամրագրման անհրաժեշտություն ունեն նվազագույն պարենային գամբյուղի և սպառողական գամբյուղի պարունակությունը և արժեքները, ինչպես նաև աղքատության գիծը՝ հաշվի առնելով ոչ միայն նյութական-կենսաբանական, այլև սոցիալական ու հոգևոր-մշակութային աղքատության չափորոշիչները:

Նշված հարցերի պատշաճ իրավական կարգավորման հրատապությունը պայմանավորված է նաև նրանով, որ կենսաապահովման նվազագույն գամբյուղն ու բյուջեն հիմք են գնահատելու հանրապետության բնակչության կենսամակարդակը, իսկ գնահատված ցուցանիշն օգտագործվում է պետական սոցիալական քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս: Դրանով հիմնավորվում են նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի, նպաստի, չհարկվող եկամտի չափերը⁶: Ցուցանիշների ոչ ճշգրիտ գնահատումը հնարավորություն չի տալիս արտացոլել երկրի առկա իրական պատկերը, որի արդյունքում էլ անհնար է դառնում ճշգրիտ և հասցեական քաղաքականության մշակումը:

Բացի այդ, Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի խորքային ախտորոշումը ցույց է տալիս, որ նպաստների և դրամական վճարների չափը ցածր է և կապված չէ նվազագույն կենսաապահովման, ինչպես նաև անձանց կոնկրետ կարիքների հետ: Նպաստների, դրամական վճարումների չափերի ճշգրտումները կամ փոփոխությունները կրում են տարերային բնույթ և մեծապես կախված են առկա բյուջետային միջոցներից (Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի խորքային ախտորոշում, 2020, էջ 20): Չնայած այն համգամանքին, որ Պետական կենսաթոշակների մասին օրենքի 4-րդ հոդվածում նշված պետական կենսաթոշակային քաղաքականության կարևոր սկզբունքներից է կենսաապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի պետական կենսաթոշակի նվազագույն չափի ապահովումը, Կառավարության 2019թ. վերջին փոփոխությունների համաձայն 26 500 դրամ նվազագույն կենսաթոշակի չափը սահմանելիս հաշվի է առնվել ոչ թե սպառողական գամբյուղը, այլ՝ պարենային աղքատության գիծը (Հայաստանի Հանրապետության կառավարության 26 դեկտեմբերի 2019 թվականի N 1920-Ն որոշում): Ինչպես տեսնում ենք, կառավարությունը դեռ չի կարողանում ապահովել կենսաապահովման նվազագույն գամբյուղին համապատասխան կենսաթոշակներ:

Որոշակի խնդիրներ կան նաև սոցիալական պաշտպանության ծրագրերի ծածկույթի հետ կապված: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. տվյալների՝ աղքատ բնակչության միայն 33.3%-ն է ստանում սոցիալական աջակցության նպաստներ (Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի խորքային ախտորոշում, 2020, էջ 28): Դրա հետ մեկտեղ Ադրբեյջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով սոցիալապես տուժել է բնակչության

6 «Կենսաապահովման նվազագույն գամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» օրենքի 4-րդ հոդված:

մի զգալի հատված, ներառյալ՝ զինծառայողներ, որոնց օգնելու համար մշակվել են մի շարք աջակցության ծրագրեր: Այս միջոցառումների շրջանակներում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» 2016թ. դեկտեմբերի 15-ի օրենքին համապատասխան «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամը հատուցումներ է տրամադրում.

- յուրաքանչյուր զինծառայողի, ում առողջությանը 2017թ. հունվարի 1-ից հետո պատճառված վնասի արդյունքում ձանաչվել է առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ,
- 2017թ. հունվարի 1-ից հետո զոհված կամ անհայտ բացակայող ձանաչված յուրաքանչյուր զինծառայողի ընտանիքի անդամներին (Հատուցումների տրամադրման կարգը):

Այնուամենայնիվ, այս ցուցակից դուրս են մնացել գերեվարված զինծառայողների ընտանիքների անդամները, որոնցից շատերը ևս ունեն սոցիալական աջակցության կարիք: Մեր կարծիքով վերը նշված գործողությունների հետևանքով գերեվարված զինծառայողների ընտանիքներն իրենց կարգավիճակով պետք է հավասարեցվեն անհայտ կորած զինվորների ընտանիքներին: Դա հնարավորություն կտա նրաց վրա տարածել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի դրույթները մինչև գերեվարված անձանց հայրենիք վերադարձնելը:

Խնդիրներ են առաջանում նաև մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ սահմանելու հարցում: ՀՀ Կառավարության կողմից 2019թ. նոյեմբերի 21-ի սահմանված «Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու» կարգին համաձայն մարտական գործողությունների մասնակցածի կարգավիճակ է տրամադրվում 1989-1994 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության մարտական գործողություններին ոչ պակաս, քան 3 ամիս ընդհանուր տևողությամբ մասնակցած անձանց: Ինչպես փաստում է Մարդու իրավունքների պաշտպանը, համապատասխան կարգավիճակ ստանալու համար 3 ամսից ոչ պակաս մասնակցության ընդհանուր կանոնի արդյունքում 2016թ. ապրիլին, 2020թ. հուլիսի և սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին մարտական գործողություններին մասնակցած անձանց գործող իրավակարգավորումներով մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ չի կարող տրամադրվել: Որոշ դեպքերում էլ մարտական գործողությունների մասնակցի վկայականի փոխարեն տրամադրվել է տեղեկանք (ՀՀ մարդու իրավունքների պաշտպան): Նշված անձանց չհաշվառելը կամ վկայական չտրամադրելը կարող է դիտարկվել որպես չհիմնավորված խտրականություն, քանի որ առաջանում է խոչընդոտ օրենսդրությամբ նախատեսված արտոնություններից և երաշխիքներից օգտվելու տեսանկյունից: Բացի այդ վերջիններս զրկվում են տվյալ կատեգորիայի անձանց տրամադրվող սոցիալական

պաշտպանությունից, օրինակ՝ անվճար բուժօգնությունից, բնակարանի արտոնությունից, դրամական աջակցությունից, զինվորական կենսաթոշակի իրավունքից և այլն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հստակեցնել մարտական գործողություններին մասնակցած անձի իրավական կարգավիճակը:

Ստեղծված իրավիճակում սիներգետիկ (փոխազդող) արդյունավետություն ունեցող սոցիալական պաշտպանության համակարգ ձևավորելու համար անհրաժեշտ է մշակել քաղաքական և օրենսդրական ռազմավարություններ՝ ներառյալ բյուջետային հիմքը, ինչպես նաև մի շարք հատուկ ծրագրեր և դրանց իրականացման համապատասխան համակարգեր: Այս մոտեցումը կապեր կհաստատի սոցիալական պաշտպանության ոլորտում և կամուրջներ կստեղծի քաղաքականության սոցիալական և տնտեսական բնագավառների միջև, կբարձրացնի վերջինիս բազմոլորտ ազդեցությունը՝ ստեղծելով միջոլորտային սիներգիա:

Արդի պահանջներին համահունչ ՀՀ Կառավարությունը 2019թ. մշակել է «Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման 2020–2025 թվականների ռազմավարության նախագիծ»-ը, որի կարևորագույն նվաճումներից է սոցիալական պաշտպանությունը ոչ թե որպես ծախս, այլ որպես ներդրում մարդկային կապիտալի մեջ դիտարկելը: Բայցևայնպես նախագիծն ունի լրամշակման անհրաժեշտություն սոցիալական պաշտպանության ոլորտի համալիր զարգացման տեսանկյունից, հատկապես՝ վերջին տարիների մարտահրավերների լույսի ներքո: Այսպես՝ ռազմավարության նախագծում ներկայացված չեն ցնցումներին արձագանքման և սոցիալական պաշտպանության համակարգի դիմակայունության հարցերը: Մինչդեռ 2020 թվականի իրադարձությունների հետևանքով երկրում առկա ճգնաժամի, Արցախի և Հայաստանի անվտանգության ապահովման ու հետձգնաժամային սոցիալ-տնտեսական վերականգնման հետ կապված, ինչպես նաև՝ կորոնավիրուսի համավարակի անորոշությունների պայմաններում հույժ կարևոր է պետության կողմից սոցիալական ապահովության ցանցեր օգտագործելու կարողությունը: Այդ իսկ տեսակետից ռազմավարությունը պետք է կրի ադապտատիվ բնույթ և կարողանա առաջարկել այլընտրանքային լուծումներ աղքատ և խոցելի տնային տնտեսությունների դիմացկունության համար՝ նման ցնցումներից առաջ, ընթացքում և հետո:

2021թ. ՀՀ Կառավարության կողմից մշակվել է նաև «Հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թ. ռազմավարություն»-ը, որտեղ առաջարկվում է երկրում սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական և այլ մարտահրավերների առաջացման դեպքում ռիսկերի կառավարման նպատակով մշակել բարեփոխումների այլընտրանքային՝ ադապտիվ սցենարներ (Հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականի ռազմավարության փաթեթը հաստատելու մասին որոշման նախագիծ): Սակայն, աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ռազմավարության նախագծում նախանշված չեն այդ սցենարների հնարավոր սկզբունքներն ու իրականացման ուղիները: Բացի այդ, փաստաթղթում անդրադարձ չի կատարվում որոշակի խոցելի խմբերի (փախստականներ, անօթ-

ևաններ, մարտական գործողությունների մասնակիցներ, ոչ ֆորմալ սեկտորում աշխատողներ և աշխատող աղքատներ) իրավունքներին:

Սոցիալական պաշտպանության ոլորտի կատարելագործման համար առանձնակի կարևոր նշանակություն ունի նաև ինստիտուցիոնալ առումով նորացված ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրումը և գործադրումը: Համակարգի ամբողջական ու արդյունավետ շահագործման հարցում առանցքային է միասնական տեղեկատվական համակարգի ամկայությունը: Այն պետք է ներառի մեկ միասնական մշտապես վարվող և պարբերաբար թարմացվող ռեեստր, որտեղ կհավաքվի և կպահպանվի ստանդարտացված տեղեկատվություն շահառուների վերաբերյալ: Նշված համակարգը հնարավորություն կտա կրճատել վարչական ծախսերը, կանխել նպաստների տրամադրման կրկնորինակումը, չարաշահումներն ու կոռուպցիոն ռիսկերը, բարձրացնել վերահսկողության արդյունավետությունը:

Եզրակացություն

Վերը շարադրվածի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ սոցիալական պաշտպանությունը հանդիսանում է մարդու հիմնական իրավունք, որը կոչված է ապահովելու բոլորի համար սոցիալական պաշտպանության նվազագույն մակարդակ ողջ կյանքի ընթացքում: Հայեցակարգային նման մոտեցումը նպաստում է այնպիսի սոցիալական պաշտպանության իրագործմանը, որը հիմնված է սոցիալական համերաշխության և սոցիալական ռիսկերի տարբերակման սկզբունքների վրա, օգնում է վերափոխել խոցելի խմբերի խնամառուական վերաբերմունքը՝ վերջիններիս վերածելով սոցիալական օգնության պասիվ ստացողներից ակտիվ աշխատողների կամ ինքնագրավածների: Այդ իսկ պատճառով սոցիալական պաշտպանությունը պետք է նախևառաջ իր ամրագրումը ստանա Սահմանադրության մեջ: Դրան համապատասխան առաջարկվում է ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլխում ավելացնել հոդված հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 56.1. Սոցիալական պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր ոք ունի իր կարիքներին համապատասխան և կյանքի ողջ ընթացքում հասանելի որոշակի բովանդակությամբ և ծավալով սոցիալական պաշտպանության ծառայությունների նվազագույն և հասցեական փաթեթ ստանալու իրավունք»⁷:

Դրա հետ մեկտեղ կարևոր ենք համարում ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանվող պետության քաղաքականության հիմնական նպա-

